

4.2.3.Ձբոսաշրջություն

Ըստ ՀՀ կառավարությանն առընթեր միգրացիայի և փախստականների վարչության կողմից ստացված Հայաստանի Հանրապետություն ժամանողների վերաբերյալ նախնական տվյալների, 2003թ. հունվար-դեկտեմբերին Հայաստանի Հանրապետություն են այցելել 206094¹ միջազգային զբոսաշրջիկներ: 2003թ. հունվար-դեկտեմբերին 2002թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ այցելած զբոսաշրջիկների թվաքանակն աճել է 27.1%-ով:

¹ Ըստ օպերատիվ հաշվարկային տվյալների: Ճշգրտված ամբողջական տվյալները ՀՀ ԱՎԾ կողմից կիրառարակվեն 2004թ. փետրվարին: